

այլազգ կարող են Կարմեղեանները իրենց ա-
նունով յանձնել զանոնք (Մովսիսի)» : . . .

«Ա. Ի մասին այն Հրահանգաց կամ Քրիս-
տոնէական մատենին, զոր խմբադրած են
Հայերը Քաղկեդնի ժողովէն ետքը նոյն ժողո-
վին վարդապետութեան դէմ. եւ զոր յիշեալ
Եպիսկոպոսն Մովսէս վարդապետ զրկած է,
որպէս զի անոր պատասխան մը տրուի, հրա-
մայեց Ս. Ժողովն, որ նոյնը հայերէնէ լատի-
ներէն թարգմանուի եւ յանձնուի քանի մը ու-
սեալ անձանց, որպէս զի անոր (բովանդա-
կութեան) մասին գեկուցում տան» :

Յայտնի չէ թէ ի՞նչ եղաւ յանձնարումքի
կարծիքը յիշեալ մատենին մասին կամ ի՞նչ
պատասխան գրուեցաւ Մովսէսի :

Նոյն տարւոյն Օգոստոս 22ին գումարուած
Նիստին մէջ կը յայտնէ նոյն Ծիրանաւորը⁵,
թէ Ս. Ժողովի մէկ որոշումը «զրկուած է
Պարսկաստանի առաքելութեան Հայերուն,
որպէս զի հոգ տանին որ արքեպիսկոպոսն
Մովսէս վարդապետ եւ անոր պաշտօնեաները
վկաներու առջեւ ի ծածուկ կաթողիկէ հաւա-
տոյ դաւանութիւնը տան եւ զայն զրկեն Հռոմ :
Այս կարեւոր է տալու համար թոյլտուութիւն,
որպէս զի իրենք (առաքեալները) Հայոց եկե-
ղեցիներու մէջ եւ փոխադարձաբար Հայերը
մեր եկեղեցիներու մէջ կարենան պատարազ
մատուցանել» :

Կը տեսնուի ասկէ թէ ի Նոր Զուղայ միու-

⁵ Անդ, թղ. 250 :